



مَجْرَعَةُ أَخْبَار
اداره خانه سی بك اوغ - نده جاده كیورده نومرو 75
MIE DJIMOUA - I - A HBAIR
JOURNAL QUOTIDIEN
Bureau : 65 Grand Rue de Péra



Սենտիմետր 120. — 6 սյուզը 60. —
Սենտիմետր 30. — ԵՖԷԼԻՐ
բոսթանը 80 զրուշ տըր :
Տէրճ խորհրդէք իւրանաթ իշին այրըճա
բալարըք օլունուր :
Հազէթահա միւթէյալիք խոստումաթ
իշինճ. ԹՕԼԱՅԵԱՆԱ միւրաճապթ օլունա

Իտարէյանէմիդ Պէյօղլունտա ճատաէյի քէպիթաէ թագալիմ ճիպարնտա նո. 65

ԱՍԻՐԻԱՆԷ 5 ԴԵԿՏԵՄԲԵՐ
ԱԶԳԱՅԻՆ
ԿԱՐԵՒՈՐ ՊԵՏԲՄԸ

(Շարունակութիւն տես թիւ 2249)
Արդ. Կ. Պոլսոյ Հայ-կաթոլիկ հասարակութեան այս անգահական օրագանը պէտք է որ ի հեռուստ կամ ի մերձուստ վերաբերութիւն ունենայ մեր հասարակութեան հետ, և որուն մէջ աւելի կարեւորութիւն պէտք էն ընծայուիլ ներքին, ազգային, ժողովրդական կեանքի, հասարակական հաստատութիւններուն և առհասարակ հասարակութեան մտաւոր և բարոյական զարգացման ծառայող յօդուածներուն : Քաղաքական լրերը պէտք է որ ըլլան գլխաւոր նշանակալի հրատարակութեան, այլ միայն լրացուցիչ մասեր : «Յառաջագիւղ» միայն մեր ազգին նախ և ապա մեր հասարակութեան օգտակար անդամներ պէտք են ըլլալ : Կը գրեր ինչ անցեալներն Պաթմէն ազնիւ յօդուածագիրն Ա. Ս. որուն այս նշանաւոր և իմաստնալից երկտողն, իբրեւ սկզբունք պէտք են ընդունիլ և որ հիմն և ուղղեցոյց պիտի ըլլայ այսպիսի հրատարակութեան մը, վասն զի դաւանութեան ազատութիւնը լոկ խօսքեր պիտի չըլլան : Դաւանութեան տարբերութիւնը ո՛չ մի կերպիւ արգելք պիտի ըլլայ յամենայնի միանալու ընդհանուրին հետ : Արդ այս լրագիրը յորում եթէ մերթ ընդ մերթ հրատարակուին զանազան յօդուածներ տնտեսական, արուեստական, մանկավարժական և արդիւնաբերական ճիւղերու, կ'ըլլայ այն միջնորդն որ պիտի տայ հասարակութեան նոր գործունէութեան հետ, նոր ալ գործունէութեան ասպարէզ, և որ պիտի կարենայ պատուով կատարել իւր դերն և օգտակար ըլլալ ընդհանրութեան : «Յայտնի, իրախան, պակասութիւններու խիւտ և կծու քննադատութիւն» ահա ինչ որ հարկաւոր է մեզ թմբեցեղոցս : Կ. Պոլսոյ մէջ միայն Հայ-կաթոլիկ հասարակութիւնն է որ չունի իրեն յատուկ կատարեալ օրագան : «Հայ-կաթոլիկներ» ազգային կատարեալ լրագիր չունինք, կ'ըսէր ինչ անցեալներս Յ. Ս. որով մենք տակաւ աշխարհաքաղաքային կը դառնանք : Որչափ զիս յուզեց այս ճշմարիտ խօսքը, որուն չկրցայ ալ պատասխան տալ և իրաւունք տուի

իրեն : Այս լրագիրը չ'ընթեռնելով ալ հասարակութիւնս վարժած է ցուրտ կենալու իւր ազգային գործոց նկատմամբ, որով մեր վարիչ մարմնոց և ժողովրդեան միջեւ պատուար մի կը բարձրանայ, որ թէ՛ ճիւղային և թէ՛ բարոյային կեդանէ մեր գործերու և կը վհատեցնէ գործելու կամք և բաղձանք ունեցողները : Հայ-կաթոլիկ մը, եթէ դիտած էք, երբեք չ'իտար իւր ազգային ինքնօրոյ վրայ, կարծես թէ չունի ազգային գործ և լրագիր որ իրեն նիւթ մատակարարէ վիճաբանութեան և կուսակցութեան տեղի տայ : Զերկարենք մեր խօսքը, վասն զի ճշմարտութիւն բարբառիլը հաճոյալուր չէ : Մի անգամ ընդ միշտ այս անպատեհութեանց և ազգակործան գնացից և դուրսեան առջեւ առնելու համար պէտք ենք մեր այս լրագիրն ընդհանրացնել որուն հետեւելի ընթացքն ալ մենք փոքր ի շատէ գծեցինք : Բայց այս ընթացքին հետեւելու համար կարօտ է լրագիրն ընդհանրութեան գործնական համակրանաց, զոր դժբաղդաբար հասարակութիւնս չ'այտնէր : Պէտք է վհատիլ և պէտք է ալ զարմանալ այս թուրութեան վերայ : Ամէն բան որ ձգուի բնականին, հարկ է որ թուլանայ, գունատի, անգործածական և ըլլայ վատթարանայ : Երկար անգամ կը ժանգոտի : Ո՛ր մնաց այսպիսի փափուկ զգացումներ, որ եթէ միշտ տաք, միշտ վառ, միշտ կենդանի չպահուին, կը մարին, մոխիր կը դառնան և անգործածական կ'ըլլան : Ինչպէ՞ս տաք պահենք մեր սիրտերը, կ'ըսեն շատերն, երբ որ մեր այս թուրութեան ալ պատճառ դրամ չունենալէ, կ'ընդունիմ այս առարկութեան ծանրութիւնը : Բայց եթէ դրամ չկայ և ժամանակները փոխուած են ըսելով զանանք մեր լուսն (զոր եթէ հաստատուն կամք և գործնական ազգասիրութիւն ունենանք կրնանք ճարել) և անհոգ նստինք, երբեք պիտի չի կենդանանանք և երբեք ալ պիտի չգիտնանք թէ ի՞նչ կ'ըլլան մեր գործերը, վասն զի չենք ընթեռնուր կամ առնուր հասարակութեան լրագիրը : Յանուն ազգասիրական պարտուց մենք գոչում կ'ընենք իւրաքանչիւրին զգացմանց և ազգասիրութեան : Մի ոմն իւր դրամն տալով իսկ միւսն իւր գրին ու գիտութիւնն մենք կրնանք գործադրել մեր ամենուս բաղձանքն, որ հետզհետէ կը գործանայ : Այս վերջին ա-

ւորաց մէջ առ իս ուղղեալ նամակը, որոնց հրապարակաւ կը յայտնեմ իմ անկեղծ շնորհակալացոյ հաւաստիքը, կը շնորհակարարութիւնն ու օգտակարութիւնն այսպիսի ազգային լրագրի մ' ծաւալման և ծրագրին կատարելութեան որուն շնորհիւ հասարակութիւնս պիտի զգենուոր ոյժ և գործունէութիւն : Սըրտանց և ամենայն անկեղծութեամբ մենք սպասելով որ այս խորհուրդալ իրականագործուի, մենք կանխաւ կը յայտնենք մեր յոյսը թէ հէռի չէ նաեւ այն օր յորում պիտի կարենանք այս լրագրոյս արդէն մատուցած ծառայութիւններն առաւել ևս օգտակար ընծայել հասարակութեանս, եթէ որ ազգայինք ալ սատարեն իւրեանց դրամով և գրչաւ : Այն օր ստուգիւ մե՛ծ և ամենամե՛ծ նշանակութեան արժանի դէպքն պիտի ըլլայ Հայ-կաթոլիկ հասարակութեան համար, որ տարակոյս չկայ թէ կարօտ է այսպիսի օգնութեան :
Յուսանք, ես կը հաւատամ այս առաժիս ստուգութեանը թէ «Երբ ո՛չ ամանեցուցանէ» : Բայց այս յոյսս այն ատեն կ'իրականանայ, երբոր Հայ-կաթոլիկ հասարակութեան վարիչք ի նկատի առնելով այս ընդհանրութեան փափագներն, կամենան գործադրել այս գաղափարներս ինչո՞ւ : Վասն զի Հայ-կաթոլիկ հասարակութեան վարչութիւնն, որ և երկարամեայ փորձառութիւնն եւս զայս կը հաստատէ, միայն կաթոլիկոսական անձին հետ կապեալ ըլլալուն, բնականապէս Այն և եթ պիտի իրադործէ իւր հպատակաց այս մէկ կարեւոր գործն ալ : Առ այս մենք կ'առաջարկենք մի յանձնախումբ կազմել, որուն նկատմամբ պատեհ հաւթիւ մը պիտի խօսինք : Նոր չէ այս գրութիւնս ալ : արդէն Եւրոպիոյ մէջ շատ լրագրեր այսպիսի մասնա. գէտ ժողովոց ձեռամբ կը հրատարակուին :
ՅՈՒՆ. Յ. ԱԼԱՆ
Իերա, ի 3 դեկտեմբերի 91

ԹԵԼԷԿՐԱՖ

Պէրլին, 15 դեկտ. — Բայնիթակ մէճ-լիսի Ավսթրիա իւր ազտ օլունան մուսահէտէն իբի մատոյսին իբիճի գըրաթտա պիւրիք պիւր էքսէրիէթէ գապուլ իթմիշ տիր :
Մ. տը Պօթէյիէր էսնաի մուսահասթտա մէքրիքանն մէսէք ու հարէքէթիտէն տօլաեը տէրմիեան օլունան

էնտիշէրէ մահէլ օլմատըղընը, վէ Ամէրիքանն նիեաթը հասէնէսի միւսէլէմ պուրունտուղունու պէտան իթմիշ տիր :
Մ. Մարչալ պիւր չօգ ազաթարաֆընտան իրաւ օլունան նութըրաւ հէվապ վիրտիկի սըրատա, մուսահէտաթը թիւճճարիէնին ահվալը հազըրէտէ բօլթի-գաճա հայիքի էհէմիէթէ օլմատեաճաղընա տայիր օլան նէշրիեաթը ըտտ իթմիշ տիր :
Բարիս, 15. — Մէճլիսի աեան մէնսուճաթ, քեաղըտ վէ մէվատըր մատէնիէ վէ քէրէսթէ հազըրէտաթի բուսուճա գապուլ իթմիշ տիր :
Մէճլիսի մէպուսանըն կէօմրիք գօմիսիսունտա Մ. Բիպօ՝ հիւքիւմէթին տէվէթէր իւր մէվճուտ օլուպ, ֆէսիս օլունան մուսահէտաթ վէ էա մուգալէլաթը թիւճճարիէնի 1892 սէնէսինտէն իթիպարէն թէմտիտ իտէպիւրէհէկի հազըրէտաթի լայիհատան պահս իյէտիկի սըրատա, Ալմանիանըն տիւէլի սայրիէ իւր ազա իյէտիկի մուսահէտաթը թիւճճարիէնին պիւր սուրէթիին գօմիսիսան թէպիւր իթմիշ տիր :
Վիէննա, 15. — Մէճլիսի մէպուսանտա պիւրտէնէ տայիր մուսահէտաթ ճէրէեան իթտիկի սըրատա, Մ. Լիւէթին պազը իֆատաթընա գարը պաշ վէթիւ գօնթ տը թաաֆ իւր տէվէթ պէյնին տէքի միւսահէտաթը հասէնէի բօլթի-գիւքիէնին ըհվալըթը թիւճճարիէնի իւր թէնյիտ օլունտուղու պիւր զէմանտա Մէճլիսի մէպուսանտա ճէրէեան իտէն մուսահէտաթըն պէոյէ պիւր ըհնք վէ սուրէթ ըհսպ իյէմէսինտէն նաշի պէեանը թէնսիւթ իթմիշ, վէ Մ. Գարի-վիէ վուգու պուլան խանտաթը ըտտ իտէրէք, միւշարիէյին միւսահէտաթը հուսուլէ կէվիշ օլան մուսահէտաթը թիւճճարիէնի իւր պիւր գաթ տահսթանքիւ, վէ պու ճիւրէթի տէվալը միւսահէտաթ թէնյիս խուսուսունտա բէք չօգ իքտամաթտա պուրունտուղունու, վէ Ավսթրիա պիւր տէվէթի մուսահէտա օլունտուղունան, տիւէլի սայրիէ իւր ազտը միւսահէտաթտա սէրպիսթ խուսկի-նի տէրմիեան իյէմիշ, վէ իւպու նութգալըզլար իւր թէլապըք օլունտուղունու :
Ալման ֆըրգասը բուէսսսընտան Մ. տը Պիլինքի իւր Մ. Գարիվի Լէհլիէր հազըրէտաթի թէնսիւթը ըտտ իտէրէք, Լէհլիէրին իթթիֆազը միւսէլէսէ սօն տէրէքէ թարաֆտար օլունտուղունը, վէ չիւնքի պու իթթիֆազա տէվալը ասայիչէ պիւր քէֆիւ նազալըլա պապտըզլարըն պէտան իյէմիշ տիր :
Բարիս, 15. — Մ. Կլատսթօն պու ագչամ մուվասըլթ իթմիշ տիր : Միւշարիէյն եարընապատար պուրատա գալտըգտան սօնրա Պիարիքէ կիտէնէք տիր :
Ահվալը սընհիէնէսի պէրէմալ տըր :
Շըմալ տօնանմաը գօմանտանը գօնթամիրալ ժէրվէ էրքեանը հարպիէի պահ :

